Ավետիք Իսահակյան

Նման գայլերի խրմբին ամեհի

Նման գայլերի խրմբին ամեհի,
Ձրմռան գիշերին ոռնում է քամին.
Եվ իմ պարտեզում – մռա՛յլ, ամա՛յի,
Խեղճ ուռիներիս ջարդում է քամին;

Ա՜խ, մանկուց լացեց քո սերը, սի՛րտ իմ,
Ոչ ո՛ք չհասկացավ երազդ աղվոր.
Ջուր մի՛ որոնիր սիրտ մի մտերիմ, -
Ծնվել է ոգին հավերժ մենավոր;

Հանի՛ր քո սերը սրրտիցրդ անհույս,
Այդ խորթ, ապօչեն զավակն աշխարհի, -
Ձգի՛ր այս դաժա՛ն, մո՛ւթ գիշերին դո՛ւրս՝
Ցուրտ քամու բերան… թո՛ղ երթա սառի…

Թո՛ղ լա, հեծեծա սերրս՝ որբ, անմա՛յր,
Եվ քամին լացը նրա թո՛ղ տանի
Ալեկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդո՛ւ մոտ… երբեք չրտանի…

Ոռնում է քամին, վայում դրժնդակ
Մռայլ գիշերին ձյուն-ձմեռնայնի.
Եվ սերրս ջարդված ուռիների տակ
Մեռնում է մենակ. Թո՛ղ երթա՝ մեռնի…

1904

Ալեքսանդրապոլ